ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1022-10.03.2025-ԳԿ-011/0), «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1022[1]-10.03.2025-ԳԿ-011/0) և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1022[2]-10.03.2025-ԳԿ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1022-10.03.2025-ԳԿ-011/0), «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1022[1]-10.03.2025-ԳԿ-011/0) և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1022[2]-10.03.2025-ԳԿ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծերի փաթեթով կատարվող լրացումների և փոփոխության տեքստում կիրառված «անհատույց անժամկետ օգտագործման իրավունք» ձևակերպումն՝ առաջարկում ենք վերանայել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում սահմանված հասկացությունները: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածում սահմանված է գույքի անհատույց օգտագործման պայմանագրի վերաբերյալ իրավադրույթներ, որի 2-րդ մասի համաձայն. «*2. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 608 հոդվածով,* ***612 հոդվածի 1-ին կետով և 2-րդ կետի առաջին պարբերությամբ****, 617 հոդվածով, 624 հոդվածի 2-րդ կետով, 626 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված կանոնները.*»:

Սույն դրույթի ուժով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին կետի և 2-րդ կետի 1-ին պարբերությամբ սահմանված վարձակալության պայմանագրի ժամկետի վերաբերյալ կարգավորումները տարածվում են անհատույց օգտագործման պայմանագրի նկատմամբ, որոնք սահմանում են հետևյալը. «*1. Վարձակալության պայմանագիրը կնքվում է պայմանագրով որոշված ժամկետով:*

2. Եթե վարձակալության ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Այդ դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ, իսկ անշարժ գույքի վարձակալության դեպքում՝ երեք ամիս առաջ տեղեկացնելով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով.»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նշենք որ անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվում է որոշակի ժամկետով, սակայն եթե ժամկետը պայմանագրում որոշված չէ, ապա անհատույց օգտագործման պայմանագիրը կնքված է համարվում անորոշ ժամկետով: Ուստի «անհատույց անժամկետ օգտագործման իրավունք» ձևակերպումն անհրաժեշտ

ենք համարում վերանայել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված անհատույց օգտագործման վերաբերյալ դրույթներով նախատեսված հասկացությունների տեսանկյունից:

Միաժամանակ նշենք, որ «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (փաստաթղթային կոդ՝ Կ-999-20.01.2025-ՏՏԳԾ-011/0), «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի (փաստաթղթային կոդ՝ Կ-999[1]-20.01.2025-ՏՏԳԾ-011/0) և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթում ներառված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով Հայաստանի Հանրապետության հողային օերնսգրքում որդեգրվել է այն մոտեցումը, որ անհատույց օգտագործման իրավունքի վերաբերյալ դրույթից հանվել է «անժամկետ» եզրույթը: Վերոնշյալ նախագիծը 2025 թվականի մարտի 5-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ:

2. «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել (այսուհետ՝ Օրենք) ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նախագծով «Քաղաքաշինության մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում կիրառված (այսուհետ՝ Օրենք) ձևակերպմանը:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չեն պարունակում:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված իրավակարգավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
31.03.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
31.03.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված Նախագծերի փաթեթով առաջարկվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) հստակեցնել անորոշ ձևակերպումներ ու սահմանել Լիազոր մարմնի կողմից պատմության և մշակույթի հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման, տեղափոխման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու շինարարության

թույլտվությունների տրամադրման դեպքերը: Առաջարկվում է հստակեցնել նաև, որ Լիազորված մարմնի կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքներն ու շինարարության թույլտվությունները տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի հուշարձանների համար, ինչպես նաև սահմանել որոշ լիազորող նորմեր՝ պետական մարմինների գործունեության հստակեցման և ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանության ապահովման նպատակով:

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
(հեռ.՝ 011 513-668)
17.03.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթով առաջարկվում է լրացումներ և փոփոխություններ կատարել «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք), համապատասխան փոփոխություն և լրացում կատարելով նաև հարակից օրենքներում:

Նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է Օրենքում անորոշ ձևակերպումները և լիազորված մարմնի գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև

Օրենքի տեքստում օգտագործվող «արգելոց» բառը միջազգային տերմինաբանությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Մասնավորապես, Նախագծերի փաթեթով առաջարկվում է Օրենքում սահմանել լիազորված մարմնի կողմից պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման, տեղափոխման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու շինարարության թույլտվությունների տրամադրման դեպքերը, իսկ «արգելոց» բառը՝ փոխարինել «հնավայր» բառով: Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև «Քաղաքաշինության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում նախատեսել դրույթ առ այն, որ Հողային օրենսգրքով սահմանված հատուկ պահպանվող տարածքների հողերի պատմական և մշակութային հողերում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման ճարտարապետահատակագծային առաջադրանքների, շինարարության թույլտվությունների, շինարարության ավարտական և շահագործման ակտերի տրամադրման հարաբերությունները կարգավորվում են Օրենքով:

Նախագծերի փաթեթի ընդունումը, ըստ հեղինակի, կնպաստի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանը:

Նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Լ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Ս. Համբարձումյան (հեռ. 011-513-360)

19.03.2025թ.